Հավելված 1
ՀՀ ԿԳ նախարարի
2012 թվականի ---------- - ի
N ---------- հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ
ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Հայեցակարգ

Հայաստանի Հանրապետությունն ինտեգրվել է Եվրոպական մի շարք կառույցների, այդ թվում՝ Եվրոպական խորհրդին: Եվրոպական խորհրդի կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողովի կողմից մշակվել է լեզուների իմացության/իրազեկության համընդհանուր համակարգ: Ըստ այդ համակարգի օտար լեզվի ուսումնառությունը դիտվում է որպես հաղորդակցվելու կարողությունների զարգացմանը միտված կրթական գործընթաց: ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված /2007թ./ օտար լեզուների չափորոշիչներում և ծրագրերում հստակ ընդգծված են օտար լեզուների ուսուցման նպատակները, խնդիրներն ու սկզբունքները, սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված քայլերն ու գործողությունները, որոնք անշուշտ կարելի է զարգացնել միջմշակութային հարաբերությունների, շփումների միջոցով:

Երրորդ օտար լեզվի ուսուցումը կարևոր քայլ է բազմալեզվության հասնելու ճանապարհին, որը հնարավորություն կտա սովորողին ընդարձակելու շփումների ոլորտը, հաղորդակցվելու հնարավորությունները և կնպաստի սովորողի շփման վստահության բարձրացմանը:

Հանրապետության հանրակրթական մի շարք դպրոցներում արդեն հինգերորդ դասարանից դասավանդվում է 3-րդ օտար լեզու /դպրոցի ընտրությամբ՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլն/, որը հարաճուն պահանջ է դարձել և համահունչ է միջազգային կրթական պահանջներին:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներն են՝

- Հաղորդակցական կարողությունների զարգացում
- Ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու հնարավորությունների իրականացում
- Ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, սովորույթների, ավանդույթների իմացություն
- Սովորողների մոտ սեփական երկրի և այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձևավորում
- Ինքնակրթությամբ զբաղվելու կարողության ձևավորում:

Երրորդ օտար լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- Զարգացնել սովորողների լեզվական խոսքային, հանրամշակութային, գործաբանական, փոխհատուցման, ուսումնաճանաչողական կարողությունները
- Բարձրացնել դպրոցից դուրս սովորողի շփման վստահությունը
- Հարստացնել սովորողի օտարալեզվյան բառապաշարը
- Ձևավորել ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունները
- Զարգացնել ընթերցած նյութը վերլուծելու կարողությունը
- Զարգացնել սովորողների բանավոր խոսքը՝ կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով
- Զարգացնել ընդհանուր խոսքային՝ խոսելու և լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման՝ ընթերցանության միջոցով օտար լեզվով նյութը հասկանալու և գրավոր խոսքին տիրապետելու հմտությունները:

Երրորդ օտար լեզվի ուսուցման հիմնական սկզբունքներն են՝

- Ուսուցումը, դաստիարակությունը պետք է իրականացնել՝ ելնելով հաղորդակցա-կան-ճանաչողական մոտեցումներից
- Ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է ապահովի ուսումնառության դրդապատճառների ձևավորումը,
- Պետք է կիրառել սովորողին ծանոթ լեզուների լեզվական երևույթների ձևի ու բո-վանդակության բազմապիսի կապեր,
- Սովորողների մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացումը պետք է զուգակցել լեզուների ուսուցման գործընթացում դաստիարակչական խնդիրների իրականացմանը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման կազմակերպման ընդհանուր մոտեցումներ

Երրորդ օտար լեզվի ուսուցման կազմակերպման մոտեցումները որոշակիորեն ելնում են արդեն իսկ գործող օտար լեզուների ուսուցման կազմակերպման մեթոդաբանությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երրորդ օտար լեզվի ուսուցումը հիմնականում հետապնդում է շփման, հաղորդակցման, ինքնակրթության կազմակերպման նպատակներ, ուսումնական գործընթացը նպատակաուղղված է կարդալու, լսելու, խոսելու, ինչպես նաև՝ առօրյա թեմաներով որոշակի գործնական գրություններ կազմելու, ձևակերպելու /նամակ, դիմում, անձնական թերթիկի լրացում և այլն/ ուղղությամբ:

Լեզվական նյութը /քերականություն, բառապաշար, հնչյունաբանություն/ պետք է լինի պարզեցված և ընտրողաբար, այսինքն՝ անհրաժեշտ է ընտրել քերականական նյութի ամենաանհրաժեշտ և գործածական կառուցվածքները: Քերականական նյութի մատուցումն իրականացվում է հիմնականում խոսքային նմուշների և կառույցների գործնական կիրառման միջոցով /դերային խաղեր, երկխոսություններ, ՏՀՏ-ների կիրառում և այլն/: Ելնելով տարիքային առանձնահատկություններից՝ երրորդ օտար լեզվի ուսուցումը կարելի է կազմակերպել հետևյալ թեմաների շուրջ. <Ես և իմ շրջապատը>, <Իմ ընտանիքը>, <Իմ դպրոցը>, <Սնունդ>, <Գնումներ>, <Բնություն>, <Համակարգիչ> ինչպես նաև տալ անհրաժեշտ տեղեկություններ ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, աշխարհագրության, սովորույթների և ավանդույթների մասին:

Ելնելով վերոնշյալից, երրորդ օտար լեզվի արդյունավետ ուսուցման կազմակերպման համար կարելի է առաջարկել այսօր հանրակրթական դպրոցներում գործող 3-9-րդ դասարանների օտար լեզուների դասագրքերը: Այն դպրոցները, որոնք հնարարվորություն ունեն ձեռք բերել այլ դասագրքեր, խորհուրդ է տրվում որպես անգլերենի ուսումնական ձեռնարկ օգտագործել Քեմբրիջի հրատարակչության “More” դասագրքերի և ձեռնարկների շարքը:

Գերմաներենի ուսուցման համար առաջարկվում է <Կլետ> հրատարակչության “Wir” դասագրքերի և ձեռնարկների շարքը:

Ֆրանսերենի ուսուցման համար առաջարկվում է CLE հրատարակչության <Amis et compagnie> դասագրքերի և ձեռնարկների շարքը:

Նշված դասագրքերը և ձեռնարկները ներառում են անհրաժեշտ լեզվական նյութ և խոսքային գործունեության տեսակների զարգացման առավել արդյունավետ վարժություն-

ների համակարգ, ինչպես նաև՝ CD-ներ, որոնք կնպաստեն խոսքային գործունեության տարբեր տեսակների զարգացմանը.

- Ունկնդրման հմտությունը զարգացնող առաջադրանքներ
- Խոսքային հաղորդակցական և արտասանական կարողությունները զարգացնող առաջադրանքներ
- Գրավոր խոսքը հասկանալու և գրավոր խոսք ստեղծելու կարողությունը զարգացնող առաջադրանքներ:

Սովորողներին առաջարկվում է ներկայացնել իրենց, խոսել իրենց ճաշակի, ընկերների, դպրոցի, ընտանիքի, իրական և երևակայական արարքների, ցանկությունների մասին և արտահայտել սեփական կարծիք:

Անկախ այն բանից, թե ինչ դասագիրք է կիրառվում, անհրաժեշտ է ուսուցումը կազմակերպել այնպես, որ 5-րդ և 6-րդ դասարանների սովորողներն ունենան լեզուների իմացության/իրազեկության Եվրոպական համակարգի A1 մակարդակի պահանջներին համապատասխան գիտելիքներ և 7-9-րդ դասարանների սովորողները հիմնական դպրոցի ավարտին ունենան A2 մակարդակի պահանջներին համապատասխան գիտելիքներ:

Երրորդ օտար լեզվի ուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է տրամադրել շաբաթական ոչ պակաս, քան երկու ժամ /տարեկան 68 ժամ/: Լեզվական միջավայրի բացակայության պայմաններում անհրաժեշտ է ուսուցումը կազմակերպել այնպես, որ սովորողները հնարավորինս հաճախակի ներգրավվեն 3-րդ օտար լեզվի ուսումնառության գործընթացին, այդ իսկ պատճառով բավարար ժամանակ է պահանջվում թե' լեզվամտածողության ձևավորման, և թե' լեզուն որպես հաղորդակցման միջոց կիրառելու համար:

Հանրակրթական դպրոցի 3-րդ օտար լեզվի առարկայական չափորոշիչ և ծրագրեր

Երրորդ օտար լեզվի չափորոշիչը կոչված է որոշակի դարձնելու հանրակրթության տարբեր փուլերում օտար լեզուների ուսումնական բեռնվածության ծավալը, սովորողներին ներկայացվող պահանջները, գնահատման չափանիշները և գիտելիքներն ու հմտությունները վերահսկելու միջոցների ամբողջությունը:

Այսօր օտար լեզուների՝ որպես ուսումնական առարկայի հիմնական նպատակը հաղորդակցական կարողությունների ու հմտությունների ձևավորումն է, որը ներառում է անմիջական հաղորդակցման, խոսելու և լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման, այսինքն՝ ընթերցանության միջոցով օտար լեզվով տեքստը հասկանալու և գրավոր խոսքին տիրապետելու բաղադրիչները:

Միջին դպրոցի 5-9-րդ դասարանները ավարտողը 3-րդ օտար լեզուն ուսումնասիրելիս պետք է կարողանա.

1. **Բանավոր խոսք** ***/Երկխոսություն/***

- Ճիշտ արտասանել օտար լեզվի հնչյունները, հնչյունակապակցությունները, պահպանել բառերի և նախադասությունների ճիշտ շեշտադրությունը և հնչերանգը:
- Կիրառել պարզ խոսքային արտահայտություններ, ուսումնասիրվող լեզվին բնորոշ բարեկիրթ հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվական և խոսքային կարողություններ /նմուշներ, օր.՝ ողջունել, հրաժեշտ տալ, շնորհակալություն հայտնել, հրավեր անել, հրավերքն ընդունել կամ չընդունել և այլն:/
- Որոշակի ծանոթ իրադրության մեջ փոխանակել /3-5/ ռեպլիկ, ոչ միայն արձագանքել ռեպլիկներին, օրինակ՝ պատասխանել հարցին, այլ նաև խթանող հարց տալ՝ զրույցը շարունակելու համար:
- Առանց նախնական պատրաստության հաղորդակցվել մեկ կամ մի քանի զրուցակիցների հետ պարզ թեմաների շուրջ:

Մենախոսություն

- Նկարագրել անձերին, իրեր, երևույթներ, իրադարձություններ:
- Նկարագրել պարզ թեմաներով նկարներ:
- Պատմել դեպքերի, իրադարձությունների, իր հույզերի կամ զգացմունքների մասին:
- Տեղեկացնել, նորություններ հաղորդել:
- Բնութագրել, դատողություններ անել, կարծիք հայտնել այս կամ այն երևույթի, հարցի, իրադարձության մասին, հիմնավորել իր կարծիքը և այլն:
- Ներկայացնել իր երկրի և ժողովրդի հանրամշակութային պատկերը:
- Արտահայտվել տրված որոշակի իրադրության մասին՝ օգտագործելով լեզվական տարբեր կաղապարներով կառուցված /5-7/ կապակցված նախադասություն՝ խոսքում ընդգրկելով նաև նկարագրական տարրեր:

2. Ընթերցանություն

Ընթերցանության ուսուցումը սկսվում է բանավոր ներածական դասընթացից հետո: Կարդալու նյութի խոսքային նմուշները և բառապաշարը լիովին համընկնում են նախնական դասընթացի ժամանակ յուրացրած խոսքային նմուշներին, քերականական կառուցվածքներին և բառապաշարին:

Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության տեսակ, ունի իր յուրահատուկ հաղորդակցական խնդիրը. այն տեղեկատվություն ստանալու աղբյուր է և ենթադրում է առնվազն հետևյալ հիմնական կարողությունները.

- ընդհանուր բովանդակության ընկալում.
- տեղեկատվության որոնում.
- բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալում:

Սովորողները պետք է կարողանան.

- Կարդալ /բարձրաձայն կամ լուռ/ լեզվական դժվարություններից զերծ ոչ բարդ 1-2 % անծանոթ բառերով տեքստեր 200-250 բառերի սահմանում՝ պահպանելով ճիշտ առոգանությունը, հնչերանգը, ռիթմը, շեշտադրությունը և ըմբռնելով տեքստում շարադրված փաստերը, նրանց միջև եղած կապը:
- Հասկանալ կարդացած նյութի կամ թեմայի բովանդակությունը և ներկայացնել այն:
- Կարդալ և ներկայացնել լեզվակիր, այլ ժողովուրդների և իր ժողովրդի հիմնական տոները, սովորույթները, հանրահայտ մարդկանց արվեստը:
- Կարդալ ոչ բարդ տեքստեր՝ ըմբռնելով դրանց բովանդակությունն ամենաընդհանուր գծերով (առանց բառարանի): Տեքստերը պետք է կառուցված լինեն յուրացված կառուցվածքների, քերականական նյութի և բառապաշարի հիման վրա:

Սովորողները պետք է կարողանան նաև լուռ կարդալ և հասկանալ ադապտացված գեղարվեստական, ինչպես նաև գիտահանրամատչելի գրականությունից ընտրված տեքստեր, որոնք կարող են պարունակել նաև անծանոթ բառեր, որոնց իմաստը հնարավոր է բացահայտել բառակազմական կաղապարների միջոցով, ինչպես նաև համատեքստում կամ մայրենի և օտար լեզուների միջև եղած բառերի նմանության հիման վրա:

3. Ունկնդրել (խոսքը լսելով հասկանալ)

Ունկնդրելը դիտարկվում է որպես ուսուցման նպատակ և միջոց:

Սովորողները պետք է կարողանան.

- Դասի ընթացքում հասկանալ ուսուցչի խոսքը, հրահանգները և իրենց ընկերների խոսքը,
- լսելով հասկանալ 1-2 րոպե տևողությամբ տեքստեր (կենդանի խոսքով և ձայնագրությամբ),
- հասկանալ տեքստի հիմնական բովանդակությունը,
- տարբերակել և ընտրողաբար ընկալել իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը,
- հասկանալ տեքստի լիակատար և մանրամասն բովանդակությունը,
- լսելով հասկանալ և հակիրճ ներկայացնել /ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ/ լսածի բովանդակությունը,

- լսելով հասկանալ զրուցակցի խոսքը ծանոթ թեմաների ու բառապաշարի շրջանակում և ներկայացնել այն,

- որոշել հիմնական փաստերը, դեպքերն ու իրադարձությունները:

4. Գրավոր խոսք

Երրորդ օտար լեզվի ուսուցումը դպրոցում սկսվում է տառուսուցմամբ: Գրել սովորեցնելը կարդալ սովորեցնելու հետ զուգահեռ է կատարվում՝ ներածական բանավոր դասընթացից հետո: Սովորողների գրելու ունակություններն ամփոփվում են այն բառապաշարով, քերականական և խոսքային նմուշներով, որոնք արդեն յուրացվել են բանավոր խոսքում:

Գրելը՝ որպես խոսքային գործունեության ինքնուրույն տեսակ, մտքերի գրավոր ձևակերպումն ու արտահայտումն է :

Սովորողները պետք է կարողանան

- տարբերել տառեր, տառակապակցություններ, բառեր, նախադասություններ,
- արտագրել տեքստը՝ լրացնելով բացթողումները,
- գրավոր վերարտադրել թեմայի բովանդակությունը,
- լրացնել անձնական տվյալներ պահանջող հարցաթերթ,
- շնորհակալական նամակ գրել,
- հրավերք գրել,
- շնորհավորական նամակ գրել,
- տեղեկատվություն խնդրել,
- արտահայտել համակրանքը և հակակրանքը,
- նկարագրել մի որևէ առարկա, վայր, անձնավորություն,

Գրավոր խոսքի ծավալը՝ /5-7/ նախադասություն: